# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում 17.05.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/24-2 ծածկագրով պայմանագրում 16.07.2018թկատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Համապատասխան ֆինանսկան միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն Նկատի ունենալով, որ հատկացվել է համապատասխան ֆինանսական միջոցներ՝ կնքվել է համաձայնագիր 2018թ. մասով ապրանքների ձեռք բերման պայմանագրը ուժի մեջ մտնելու վերաբերյալ: Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 117 408 375 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սույն Ապրանքի գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Գնորդը մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Տ. Բաղդասարյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-18:**

**Էլ. փոստ՝ t.baghdasaryan@mil.am :**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**Հավելված N 1**
**№ ԲՄԱՊՁԲ-7/24-2 պայմանագրին կից**
**№ 1 Համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Ապրանքների մատակարարումը 2018թ. օգոստոս |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ներքնաշոր՝տաք | լ-կ | 35 775 | 2 385 | 85 323 375 | 35 775 |
| 2 | Մայկա - ֆուֆայկա կոմուֆլյաժ | հատ | 15 000 | 2 139 | 32 085 000 | 15 000 |
| Ընդամենը | | 117 408 375 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ | | | | |

**Ծանոթություն՝** Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

**Հավելված N 2**
**№ ԲՄԱՊՁԲ-7/24-2 պայմանագրին կից**
**№ 1 Համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ներքնաշոր՝ տաք | 18311170/304/9/20 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 |
| 2 | Մայկա - ֆուֆայկա կոմուֆլյաժ | 18331300/304/9/2 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԲՄԱՊՁԲ-7/24-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16.07.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ԲԼԱԺ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 17.05.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/24-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատակարարել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 117 408 375 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սույն Ապրանքի գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2. Գնորդը մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԲԼԱԺ» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100083030000
ՀՎՀՀ 00932296
տնօրեն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հավելված N 1**
**№ ԲՄԱՊՁԲ-7/24-2 պայմանագրին կից**
**№ 1 Համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Ապրանքների մատակարարումը 2018թ. օգոստոս |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ներքնաշոր՝տաք | լ-կ | 35 775 | 2 385 | 85 323 375 | 35 775 |
| 2 | Մայկա ֆուֆայկա կոմուֆլյաժ | հատ | 15 000 | 2 139 | 32 085 000 | 15 000 |
| Ընդամենը | | 117 408 375 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ | | | | |

**Ծանոթություն՝** Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

**Հավելված N 2**
**№ ԲՄԱՊՁԲ-7/24-2 պայմանագրին կից**
**№ 1 Համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ներքնաշոր՝ տաք | 18311170/304/9/20 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 | 85 323 375 |
| 2 | Մայկա - ֆուֆայկա կոմուֆլյաժ | 18331300/304/9/2 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 | 32 085 000 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԲԼԱԺ» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100083030000
ՀՎՀՀ 00932296
տնօրեն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ